Հաստատում եմ
Դպրոցի տնօրեն՝ Ռ. Պիպոյան
«30» ...08... 2022թ.

Ստուգված է՝
Ուսումնական աշխատանքների գծով
տնօրենի տեղակալ՝ Գ. Խանամիրյան
«30»..08 2022թ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՑՆՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԱՄՆԱԽՈՒՄԲ

2022 – 2023 ՈՒՍՏԱՐԻ

ՄԱՄՆԱԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ԲԱԴԵՅԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2021-2022 ուստարվա ֆիզկուլտուրա, ՆԶՊ և տեխնոլոգիա առարկաների մասնախմբի տարեկան պլանով նախատեսված աշխատանքները հիմնականում կատարված են: Ուսուցիչների կողմից պահպանվել է ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակը, աշակերտները գնահատվել են չափորոշիչներին համապատասխան: Ստուգվել է թեմատիկ պլաններում առարկայի չափորոշիչային պահանջների համապասխանությունը:

2021-2022 ուտարվա ընթացքում կատարվել է 73 ժամ դասալսում, տեխնոլոգիա առարկայից տարեկան 27 ժամ, ֆիզկուլտուրա առարկայից տարեկան 22 ժամ, ՆԶՊ առարկայից տարեկան 24 ժամ, իսկ փոխադարձ դասալսում տարեկան 73 ժամ:

2021թ.հոկտեմբերի 05-21ը ընկած ժամանակահատվածում ուսումնասիրվել է 1-4 դասարաններում ֆիզկուլտուրա առարկայի դրվածքը դպրոցում: Ապահովվել է ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման ձևերը:

2022թ. հունվար ամսին ուսումնասիրվել է ՆԶՊ առարկայի դրվածքը 8-9-րդ դասարաններեում:

2022թ. փետրվարի ամսին ուսումնասիրվել է տեխնելոգիա առարկայի դրվածքը 5-7-րդ դասարաններում:

Ուսումանկան տարվա ընթացքում սպորտային և ռազմահայրենասիրական միջոցառումները ըստ ժամանակացույցի կատարվել են . ուսումնական տարվա ընթացքում ուշադրություն է դարձվել աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակության և հայեցի դաստիարակության հարցերին: 2021-2022 ուստարում նախատեսված դասերի ժամաքանակը համապատասխանում է ֆիզկուլտուրա, ՆԶՊ և տեխնոլոգիա առարկաների ուսումնական, թեմատիկ և տարեկան պլանների կատարողականին: 2021-2022 ուստարվա աշխատանքները գնահատվել է բավարար: Հաշվի առնելով բացթողումներն ու թերությունները մասնախումբը նոր ուսումնական տարում իր առջև դնում է հետևյալ խնդիրները՝

1. Ձեռք բերել համապատասխան մարզագույք՝դասերն ավելի որակյալ դարձնելու համար:
2. Տեխնոլոգիայի կաբինետի վերազինման ուղղությամբ շարունակական աշխատանք տանել:
3. Տարածքային և մարզային առաջնություններում ապահովվել մրցանակային առաջատար տեղեր:
4. Համագործակցել Գավառի ատաղձագործական, փայտամշակման արհեստանոցների հետ՝ տեխնոլոգիա առարկայի գործնական պարապմունքներն արդյունավետ կազմակերպելու համար:
5. Շարունակական աշխատանք տանել ՆԶՊ կաբինետի վերազինման և գույքի ձեռքբերման ուղղությամբ:

ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1	2	3	4
1	Հայրենական մեծ պատերազմի վետերանների, Արցախյան պատերազմի մասնակիցների հետ հանդիպումների կազմակերպում:	ուստարվա ընթացքում	Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ (ԴԱԿ) ծնողական խորհուրդ
2	Ծաղիկներ դնել Անհայտ զինվորի, Անկախության, Հայաստանի սահմանների պաշտպանության համար, Հայրենական մեծ պատերազմում զոհված մարտիկների հուշարձաններին:	մայիսի 9	(ԴԱԿ), ծնողական խորհուրդ, աշակերտական խորհուրդ
3	Սովորողների ֆիզիկական և ռազմահայրենասիրական դաստիարակության բարելավման նպատակով դպրոցի մարզական գույքի համալրում, դպրոցում գործող թիմերի անդամների համար սպորտային հագուստի ձեռքբերում:	ուստարվա ընթացքում	Տնօրեն, փոխտնօրեն, (ԴԱԿ) ծնողական խորհուրդ, աշակերտական խորհուրդ, ֆիզղեկ, զինղեկ
4	Ռազմամարզական խաղերի քաղաքային, մարզային և հանրապետական փուլերին դպրոցի աշակերտների ակտիվ և արդյունավետ մասնակցության ապահովում:	ուստարվա ընթացքում	Տնօրեն, փոխտնօրեն, զինղեկ
5	Դպրոցում գործող սպորտային թիմերին աջակցում և համապատասխան պայմանների ստեղծում: Թիմերի արդյունավետ մասնակցության ապահովում քաղաքային և մարզային մրցաշարերին:	ուստարվա ընթացքում	Տնօրեն, փոխտնօրեն, ֆիզղեկ, ծնողական խորհուրդ

6	Սպորտային միջոցառումների, միջդասարանային սպորտլանդիաների կազմակերպում:	ուստարվա ընթացքում	Փոխտնօրեն, աշակերտական խորհուրդ, ֆիզղեկ

1	2	3	4
7	Դպրոցում փառքի սրահի ստեղծում: Հայ անվանի զինվորներին, ՀՀ ազգային հերոսներին նվիրված վահանակների ստեղծում և թարմացում:	ուստարվա ընթացքում	Զինղեկ՝Ա. Մովսիսյան
8	Գարեգին Նժդեհին նվիրված միջոցառման կազմակերպում:	2-րդ կիսամյակ ապրիլ	Զինղեկ՝ Ա. Մովսիսյան
9	Հայոց բանակին նվիրված միջոցառման կազմակերպում:	2023թ. հունվար	Զինղեկ՝Ա. Մովսիսյան
10	ՀՀ Պաշտպ. Նախարարության N զորամասի հետ համա գործակցության շրջանակներում աշակերտների հետ մարտական պատրաստության պարզեցված ծրագրով գործնական պարապմուքների անցկացում:	Կիսամյակը մեկ	Զինղեկ N զ/մ հրամանատարություն
11	«Արիության դասերի » կազմակերպում սպաների հետ Վ. Սարգսյանին նվիրված բաց դասի կազմակերպում:	2023թ.փետրվար	Զինղեկ՝Ա. Մովսիսյան, N զորամասի հրամանատարություն
12	Զորամասում «Դպրոցական օր» միջոցառման անցկացում	2022 -2023թթ ուստարվա ընթացքում	Զինղեկ՝Ա. Մովսիսյան, N զորամասի հրամանատարություն
13	Միջոցառումներ՝ նվիրված Մեծ հայրենականում տարած հաղթանակին և Շուշիի ազատագրման տարելիցին:	2023թ -մայիսի 9-ին	Զինզեկ՝ Ա. Մովսիսյան
14	Աշակերտների համար շարային պատրաստության, զենքով վարժությունների, զենքի քանդնման,մաքրման, հավաքման, ուսուցողական պարապմունքների կազմակերպում և անցկացում:	Ուստարվա ընթացքում մայիս	Զինղեկ՝ Ա. Մովսիսյան

15	Աշակերտների համար էքսկուրսիաների և արշավների կազմակերպում «Մայր Հայաստան», «Սարդարապատ» հուշահամալիրներ, Վ. Սարգսյանի տուն թանգարան:	Ուստարվա ընթացքում	Դասղեկներ, զինղեկ՝Ա. Մովսիսյան ֆիզղեկ՝Գ. Բաղեյան
16	Աշակերտներին ծանոթացնել հակահրդեհային կանոններին, տարաբնույթ աղետներին դիմագրավելու կանոններին:	Ուստարվա ընթացքում	Գեղարքունիքի մարզի ԱԻՆ սպաներ և զինղեկ՝Ա. Մովսիսյան

Ֆիզկուլտուրա, տեխնոլոգիա, ՆԶՊ, կերպարվեստ, երաժշտություն մասնախմբի աշխատանքային պլան

2022-2023 ուստարվա Գավառի N 3 հիմնական դպրոցի մասնախմբի ղեկավար՝Գ.Բաղեյան

Նոր ուսումնական տարվա գլխավոր խնդիրները

Որակական նոր մակարդակի վրա բարձրացնել ֆիզկուլտուրա, տեխնոլոգիա, ՆԶՊ,կերպարվեստ և երաժշտություն առարկաների դասավանդումը դպրոցում: Բարձրացնել յուրաքանչյուր դասի արդյունավետությունը, լայնորեն օգտագործելով համագործակցային ուսուցման, նոր մեթոդների և մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները:

Ապահովել ուսումնական ծրագրերի պահանջների կատարումը՝ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից մշակված առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

Հատուկ ուշադրություն դարձնել ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների նոր՝ինտերակտիվ մեթոդների կիրառմանը, աշակերտակենտրոն դասապրոցեսի կազմակերպմանը:

Շարունակել աշխատանքը ուսուցիչների մանկավարժական-մասնագիտական մակարդակի բարձրացման ուղղությամբ:

Ուսումնասիրել և գործնականորեն կիրառել մանկավարժական-մասնագիտական նորագույն նվաճումները՝հատկապես ուսուցիչների փորձի փոխանակման, ստեղծագործական հաշվետվությունների և բաց դասերի միջոցով:

Մանկավարժների կարևորագույն խնդիրներից մեկը համարել՝ ժամանակակից մեթոդներով դասապրոցեսի կազմակերպումը և դասին յուրաքանչյուր աշակերտին իր հնարավորությունների չափով մասնակից դարձնելը, ապահովելով սովորողների՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված առարկայական չափորոշիչներով նախատեսված նվազագույն մակարդակի յուրացումը:

Դպրցի սովորողներին, առաջին հերթին նախապատրաստել նրանց ստեղծագործական մտածողության, հմտությունների ու կարողությունների զարգացման ուղղությամբ:

Ուսուցչի աշխատանքը գնահատելիս հաշվի առնել կրթական որակի արդյունավետության բարձրացման ուղղությամբ նրա կողմից կատարած աշատանքները և տվյալ դասարանի աշակերտների ընդհանուր կարողություններին համապատասխան հնարավոր արդյունքները:

Ֆիզդաստիառակություն, նախնական զինպատրաստություն և անվտանգ կենսագործունեություն ուսումնական բնագավառի խնդիրը ֆիզիկապես առողջ, բազմակողմանի զարգացած, աշխատանքային գործունեությանը նախապատրաստրաստված, առողջ և անվտանգ ապրելակերպի կանոններին տիրապետող, արտակարք իրավիճակներում կողմնորոշվող, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ քաղաքացի ձևավորելն է :

«Տեխնոլոգիա» ուսումնական բնագավառի հիմնական խնդիրը սովորողների աշխատանքալին հմտությունների ձևավորմանը, կենցաղում աշխատելու համար անհրաժեշտ գիտելիքների ու կարողությունների ձեռքբերմանը և նախնական մասնագիտական կողմնորոշմանը նպաստելն է:

Կերպարվեստ առարկայի նպատակն է զարգացնել սովորողների պատկերավոր մտածողությունը, երևակայությունը, վերարտադրող և ստեղծագրծական երևակայությունը, հաղորդել գիտելիք գծային և գունային հեռանկարչության կանոնների մասին, ապահովել բնագիտություն և կերպարվեստ միջառարկայական կապը, ձևավորել ինքնուրույն աշխատելու կարողություններ և հմտություններ,ձևավորել դիտման և ուսումնասիրման արդյունքում ձեռք բերված գիտելիքները արդյունավետ կիրառելու հմտություններ:

Երաժշտություն առարկայի նպատակն է սովորողներին ծանոթացնել հայ ազգային երաժշտությանը, հայ ժողովրդական, ծիսական, հոգևոր և կոմպոզիտորական երգերին, զարգացնել երաժշտությունը և գրականությունը սիրելու և հասկանալու կարողություն, ձևավորել և զարգացնել տրամաբանական, ստեղծագործական, կերպարային ասոցիատիվ մտածողություն, վերլուծական հմտություններ

2022-2023 ուստարվա աշխատանքային պլանի բովանդակությունը

N	*Աշխատանքի բովանդակությունը*	*ժամկետը*	*Կատ.պատասխանատուն*	*Նշում*
1	Ֆիզկուլտուրա, տեխնոլոգիա, ՆԶՊ,կերպարվեստ և երաժշտություն մասնախմբի նախագահի ընտրություն:	2022թ. սեպտեմբեր	մասնախումբ	
2	Ըստ աշխատանքի կազմակերպման ուղեցույցի Ֆիզկուլտուրա, տեխնոլոգիա, ՆԶՊ, կերպարվեստ և երաժշտություն մասնախմբի աշխատանքների պլանավորումը և կազմակերպումը կատարվում է ԿԳՄՍ նախարարության և մարզպետարանի որոշմամբ: ֆրզկուլտուրայի դասերը կազմակերպվում են ըստ ուսուցիչներին տրամադրված մեթոդական ցուցումների կամ բացօթյա տարածքներում և սպորտային	2022թ. օգոստոս-սեպտեմբեր	մասնախմբի ղեկավար	

	մարզասրահներում:			
3	Ֆիզկուլտուրա,տեխնոլոգիա,ՆԶՊ, կերպարվեստ և երաժշտություն մասնախմբի աշատանքային պլանի քննարկում և հաստա-տում:	2022թ. օգոստոս-սեպտեմբեր	մասնախմբի ղեկավար	
4	Առարկայական թեմատիկ պլանավորումների քննարկում և հաստատում:	2022թ. սեպտեմբեր	փոխտնօրեն և մասնախմբի ղեկավար	
5	Մասնախմբի ամենամսյա նիստերի կազմակերպում և անցկացում:	ուստարվա ընդացքում	փոխտնօրեն և մասնախմբի ղեկավար	
6	Ռազմական նոր ծրագրերի, դասագրքերի մեթոդական ձեռնարկների ուսումնասիրում և քննարկում:	ուստարվա ընդացքում	փոխտնօրեն, մասնախմբի ղեկավար և անդամներ	
7	Մարզադահլիճի, ուսումնական կաբինետների կահավորում և հարստացում:	ուստարվա ընդացքում	մասնախմբի ղեկավար և անդամներ	
8	Մանկավարժական առաջավոր փորձի ուսում-նասիրում ընդհանրացում և ներդրում պրակտիկ աշխատանքում:	ուստարվա ընդացքում	փոխտնօրեն, մասնախմբի ղեկավար և անդամներ	
9	Ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժության նորագույն նվաճումներին,կազմա-կերպել սեմինարներ, ընթերցումներ:	ուստարվա ընդացքում	փոխտնօրեն և մասնախմբի ղեկավար	
10	Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական մեթոդական խորհրդատվություններ:	ուստարվա ընդացքում	փոխտնօրեն և մասնախմբի ղեկավար	
11	Սահմանված կարգով կազմակերպել փորձարկվող դասագրքերի խորհրդատվություններ:	ուստարվա ընդացքում	մասնախմբի ղեկավար և անդամներ	
12	Մանկավարժական առաջավոր փորձի ուսում-նասիրման, ընդհանրացման և ներդրման նպա-տակով՝ փոխադարձ դասալսումներ կազմակեր-Պել;	ուստարվա ընդացքում	փոխտնօրեն, մասնախմբի ղեկավար և անդամներ	
13	Փոխադարձ դասալսումների կազմակեր-պում և քննարկում:	ուստարվա ընդացքում	փոխտնօրեն, մասնախմբի ղեկավար և անդամներ	

14	Ուսումնական ծրագրերի կատարման ստուգում:	2022թ. դեկտեմբեր 2022թ. մայիս	փոխտնօրեն և մասնախմբի ղեկավար	
15	Դպրոցական օլիմպիադաների, սպորտլանդիա-ների և միջոցառումների կազմակերպում:	առաջին կիսամյակի ընթացքում	մասնախմբի ղեկավար	
16	Դասերի ընթացքում աշակերտներին բացատրել և սովորեցնել անձնական հիգիենայի, քնի, ճիշտ սնվելու, հագուստի, կանոնների և առողջ ապրելակերպի դերի ու նշանակության մասին:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար	
17	Տեխնոլոգիա առարկան նպատակաուղղել երեխաների բազմակողմանի զարգացվածության և աշխատասիրության ձևավորման մասնագիտական կողմնորոշմանը:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար և անդամներ	
18	Աշակերտներին զինել անհրաժեշտ ռազմական գիտելիքներով, պատրաստել հայրենիքը պաշտպանելու պատրաստ բազմակողմանի զարգացած պատանիներ և աղջիկներ:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար և անդամներ	
19	Սովորողների մոտ ձևավորել ինքնուրույն աշխատելու կարողություններ և հմտություններ, գունային գամմայի ճիշտ օգտագործում և հեռանկարային խնդիրների լուծում:	Ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար և անդամներ	
20	Զարգացնել երաժշտությունը և գրականությունը հասկանալու կարողություն, ունկնդրել, վերլուծել, մեկնաբանել, երաժշտության և գրականության կապը, սովորել և կատարել հայ ժեղովրդական, ծիսական, հոգևոր և կոմոզիտորական երգեր:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար և անդամները	
21	Ամփոփել տարվա կատարած աշխատանքները և արձանագրել:	ուստարվա վերջում	մասնախմբի ղեկավար	

Մասնախմբի անդամ ուսուցիչների կազմը

N	Ա.Ա.	Կրթություն	Դասարան	Առարկա
1	Բաղեյան Գագիկ	բարձրագույն	I - IX	ֆիզկուլտուրա
2	Եսայան Մանուշ	բարձրագույն	V – VII V - VII V - VII	Տեխնոլոգիա Կերպարվեստ Երաժշտություն
3	Մովսիսյան Աշոտ	բարձրագույն	VIII - IX	ՆԶՊ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

1	2	3	4	5

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու անձ	
1	2021-2022 ուս. տարվա մասնախմբի կատարած աշխատանքների ամփոփում, մեթոդմիավորման տարեկան աշխատանքային պլանի հաստատում,մեթոդմիավորման նիստի օրակարգի հաատատում, մասնախմբի նախագահի ընտրություն, հանրակրթական առարկայական ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանի, դասաբաշխման նախագծի քննարկում: Ֆիզկուլտ խորհրդի, դասարանի ֆիզ ավագների և սպորտային միջոցառումների կազմակերպչական խմբի ընտրություն և հաստատում: Աշխատանքային և թեմատիկ պլանների քննարկում և ներկայացում տնօրենի հաստատմանը: Բանավոր, գործնական, նախագծային և թեմատիկ աշխատանքների հաճախականության, թվաքանակի և գնահատման առանձնահատկությունների որոշում:	սեպտեմբեր	Մասնախմբի ղեկավար՝ Գ. Բաղեյան	
2	Ստուգել ուսուցիչների առարկայական թեմատիկ պլանները, տալ համապատասխան հանձնարարականներ: Ստուգել թեմատիկ պլաններում առարկայի չափորոշչային պահանջներին համապատասխանությունը և պլանների լիարժեքությունը:	սեպտեմբեր	Մասնախմբի ղեկավար՝ Գ. Բաղեյան	
3	Մեթոդական զեկուցում « Գնահատում »	սեպտեմբեր	ՈՒսումնական գծով փոխտնօրեն՝ Գ. Խանամիրյան	
4	Նորմատիվների հանձնում 2-9րդ դասարաններ	սեպտեմբեր	Ֆիզկուլտուրայի ուսուցիչ	
5	Հետազոտական աշխատանք Մ. Եսայան « Սովորողների գիտելիքների ստուգման նպատակները և ձևերը »	սեպտեմբեր	Մեթոդ միավորման նախագահ՝Գ. Բաղեյան	

6	Հետազոտական աշխատանք Գ. Բաղեյան « Արդարացի խաղը» գաղափարը դպրոցականների իրավական դաստիարակության գործընթացում	սեպտեմբեր	Մեթոդ միավորման նախագահ՝Գ. Բաղեյան	
7	Անցկացնել մրցումներ Հ.Հ«Ազգային ժողովի» գավաթի խաղարկության 1-6 րդ դասարանների աշակերտների շրջանում:	հոկտեմբեր	Մեթոդ միավորման նախագահ՝Գ. Բաղեյան	
8	Կատարել դասալսումներ ՝ ամսական 3 անգամ, իսկ փոխադարձ դասալսումներ 2ու անգամ: Դասալսումները կատարել նպատակային և նույն օրը քննարկել ուսուցչի հետ ՝ համապատասխան դիտողություններով և առաջարկություններով:	ուսումնական տարվա ընթացքում	Մասնախմբի ղեկավար՝ Գ. Բաղեյան	
9	Ֆիզկուլտուրա առարկայի տասնօրյակ 5-9 րդ դաս :	հոկտեմբեր	ՈՒսումնական գծով փոխտնօրեն՝ Գ. Խանամիրյան	
10	Անցկացնել ֆուտբոլի ներդպրոցական առաջնություն 7-9 րդ դասարանների հավաքական թիմերի միջև:	հոկտեմբեր	Ֆիզղեկ՝Գ. Բաղեյան և աշակերտական խորհուրդ	
11	Անցկացնել վոլեյբոլի ներդպրոցական առաջնություն 7-9 րդ դասարանների հավաքական թիմերի միջև:	նոյեմբեր	Ֆիզղեկ՝ Գ. Բաղեյան և աշակերտական խորհուրդ	
12	Անցկացնել բասկետբոլի ներդպրոցական առաջնություն 7-9 րդ դասարանների հավաքական թիմերի միջև:	նոյեմբեր	Ֆիզղեկ ՝Գ.Բաղեյան և աշակերտական խորհուրդ	
13	Օրինակելի դաս.«Ձեռնարկատիրական կրթության բաղադրիչի ինտեգրմամբ» 5-րդ դասարան	նոյեմբեր	Մասնախմբի անդամ՝Մ. Եսայան	
14	Մասնագիտական զեկուցում «Երաժշտության դերը երեխաների ընդհանուր զարգացման գործում»	նոյեմբեր	Մասնախմբի անդամ՝Մ. Եսայան	

15	Ստուգել ուսումնական ծրագրերի կատարողականը: Արդյունքները քննարկել մասնախմբի նիստում	Ուսումմնական տարվա ընթացքում	Մասնախմբի նախագահ Գ. Բաղեյան	
16	Փոխադարձ դասալսումների արդյունքների ամփոփում	Ուսումնական տարվա ընթազքում	ՈԻսումնական գծով փոխտնօրան՝Գ. Խանամիրյան մասնախմբի ղեկավար՝Գ. Բաղեյան	
17	Հետևել մասնախմբի անդամ ուսուցիչների մասնագիատական աճի, ինքնակրթության գործընթացին: Տալ հանձնարարականներ:	Ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն՝Ռ. Պիպոյան փոխտնօրեն՝ Գ. Խանամիրյան	
18	Կիսամյակի անփոփում: Կազմել արձանագրություն կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ :	դեկտեմբեր	Մասնխմբի ղեկավար՝ Գ. Բաղեյան	
19	Տեխնոլոգիա առարկային նվիրված տասնօրյակ 5-7 րդ դասարաններում:	հունվար	Կազմակերպչական գծով փոխտնօրեն՝ Գ. Խանամիրյան	
20	Մեթոդական զեկուցում «Վաղ դեռահասության հոգեբանական առանձնահատկության վերլուծություն»	փետրվար	Կազմակերպչական գծով փոխտնօրեն՝ Գ. Խանամիրյան	
21	ՆԶՊ առարկային նվիրված տասնօրյակ 8-9 րդ դասարաններում	փետրվար	կազմակերպչական գծով փոխտնօրեն՝ Գ. Խանամիրյան	
22	Քաղաքացիական պաշտպանության օրվան նվիրված վարժանք «Տարհանում»	Մարտի 1	Զինղեկ՝ Ա. Մովսիսյան	
23	Կերպարվեստ առարկային նվիրված տասնօրյակ	Մարտ	Փոխտնօրեն՝Գ. Խանամիրյան	
24	Երաժշտություն առարկային նվիրված տասնօրյակ	մարտ	Փոխտնօրեն ՝Գ. Խանամիրյան	

25	Անցկացնել ներդպրոցական սպորտլանդիա 1-7 րդ դասարանների հավաքական թիմերի միջև:	ապրիլ	Ֆիզղեկ՝ Գ. Բաղեյան	
26	Մասնագիտական զեկուցում «Առաջին օգնության տարրեր» ինչպես գործել արտակարգ իրավիճակներում:	ապրիլ	Զինղեկ՝Ա. Մովսիսյան	
27	Նորմատիվների հանձնում 2-9 րդ դասարաններ	մայիս	ֆիզղեկ՝Գ. Բաղեյան	
28	Մասնագիտական զեկուցում: «Արդարացի խաղը », գաղափարը դպրոցականների իրավական դաստիարակության գործընթացում	տարվա ընթացքում	Ֆիզղեկ՝ Գ. Բաղեյան	
29	Նախապատրաստել 9-րդ դասարանի աշակերտներին ֆիզկուլտուրա առարկայից պետական քննություն հանձնելու համար:	մայիս	Տնօրեն՝ Ռ.Պիպոյան Ֆիզղեկ՝ Գ. Բաղեյան Զինղեկ՝ Ա. Մովսիսյան	
30	Ամփոփել ֆիզկուլտուրա, ՆԶՊ. Տեխնոլոգիա, կերպարվեստ,երաժշտություն առարկաների կիսամյակը: Կազմել արձանգրություն կատարած աշխատանքների վերաբերյալ:	մայիս	Մասնխմբի ղեկավար՝ Գ. Բաղեյան	

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Կրթական 2-րդ աստիճան (1-9-րդ դասարաններ) աշակերտը «ֆիզիկական կուլտուրա » առարկայից պետք է ունենա.

1.Գիտելիքների համակարգը.

- գիտելիքներ ունենա առողջության ամրապնդման և աշխատանքային գործունեության նախապատրաստման գործում ֆիզիկական կուլտուրային դերի մասին,
- գիտելիքներ ունենա ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, անձնական հիգիենային և ինքնավերահսկողության ձևերի վերաբերյալ,
- իմանա մարմնամարզական և աթլետիկական վարժությունների անվանումները և սովորած մեկ մարզախաղի կանոնները,
- պատկերացում ունենա առողջ ապրելակերպի նշանակության մասին,
- ճանաչի և գնահատի վտանգավոր և արտակարգ իրադրությունները:

2.Կարողությունները և հմտությունները.

Պետք է ունենա հետևյալ կարողություններն և հմտությունները.

- ճանաչել իր մարմինը, խնամել այն, հետևել իր առողջական վիճակին ու ֆիզիկական զարգացմանը, խուսափել վնասվածքներից,
- նկարագրել և վերարտադրել ֆիզիկական վարժությունները, մարզաձևերը, մարզախաղերը ` օգտագործելով ճիշտ տերմինները և անվանումները,
- մարզախաղեր և ֆիզիկական վարժություններ կատարելիս՝ համագործակցել խաղընկերների հետ, գնահատել իր տեղը և դերը խմբում և պատասխանատվություն կրել իր պարտականությունների կատարման համար,
- դրսևորել հանդուրժողականություն՝թե' հաղթանակի, թե' պարտության դեպքում,
- վնասվածքների դեպքում ընկերոջը ցույց տալ առաջին օգնություն,
- կազմակերպել ֆիզիկական վարժություններով ինքնուրույն պարապմունքներ և խաղային գործողություններ,
- ճիշտ վազել, ցատկել,նետել,կատարել մարմնամարզական տարրերից կազմված վարժությունների համալիրներ,
- կարողանալ անսովոր պայմաններում օգտագործել շարժողական հմտությունները

3.Արժեքային համակարգը.

Ավարտողը պետք է.

- գիտակցի ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու անհրաժեշտությունը՝ առողջության պահպանման և ներդաշնակ զարգացման համար,
- կարևորի սեփական առողջական վիճակին և ֆիզիկական զարգացմանը հետևելու պահանջը,
- ունենա բարոյակամային հատկանիշներ, օգնության հասնելու պատրաստակամություն լինի, ընկերասեր և հայրենասեր,
- ունենա բարոյակամային հատկանիշներ, օգնության հասնելու պատրաստակամություն լինի, ընկերասեր և հայրենասեր,
- գիտակցի հայոց պետականության արժեքը և կրի պատասխանատվություն հայրենիքի ամրապնդման և պաշտպանության համար:

Միջին դասարաններում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից դպրոցականներին ներկայացվող այս պահանջներն իրականացվում են հիմնականում ֆիզիկական կուլտուրային դասերի ընթացքում ` ուսուցիչների կողմից կազմակերպվող դասերի նպատակասլաց բովանդակությամբ, դրանց ճիշտ ու արդյունավետ պլանավորմամբ և անցկացմամբ:

Մասնախմբի նախագահ՝ Գ. Բաղեյան